

Կովկասյան բարոմետր 2019, Հայաստան և Վրաստան

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑ

Աջակիցներ

Վրաստանում՝ Նյու Յորքի Կարնեգի կորպորացիա (Carnegie Corporation in New York)

և

Հայաստանում՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ (National Endowment for Democracy)

Հ ԱՆՐԱՅ ԻՆ
ՕԳՏ ԱԳՈՐԾՄԱՆ
Հ ԱՄԱՐ

Հ ՈՒՆԻՍ 2020

CRRC
Armenia



Ի՞նչ է Կովկասյան բարոմետրը

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) տնային տնտեսությունների համապետական հարցում է, որն իրականացվում է Հարավային Կովկասի ՀՌԿԿ գրասենյակների կողմից՝ երկու տարին մեկ: ԿԲ-ն տարածաշրջանում տվյալների հավաքագրման ամենահին և շարունակական նախաձեռնությունն է, որի տվյալները հասանելի են դառնում հանրային օգտագործման համար: 2004թ.-ից ի վեր, ՀՌԿԿ ԿԲ-ի հարցումներին մասնակցել է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մոտ 45,000 քաղաքացի՝ պատասխանելով սոցիալ-տնտեսական խնդիրների, արժեքների, համոզմունքների, և քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ տարբեր հարցերի: 2015թ.-ից ի վեր, ԿԲ-ն իրականացվել է միայն Հայաստանում և Վրաստանում:

ԿԲ-ի հիմնական նպատակն է լայն հանրությանը, հետազոտողներին, լրագրողներին և քաղաքականություն մշակողներին ապահովել բարձրորակ տվյալներով Հարավային Կովկասում առկա հասարակական-քաղաքական և տնտեսական միտումների վերաբերյալ: Ինչպես ցույց են տալիս *Google Scholar* հարթակի տվյալները, 2020թ.-ի հունիսի դրությամբ, Կովկասյան բարոմետրին և վերջինիս նախորդած ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնությանը (CRRC Data Initiative) հղում են կատարել շուրջ 3,000 գիտական հրապարակումներ: Բացի այդ, ԿԲ-ի տվյալներն օգտագործվել են հանրային քաղաքականության տասնյակ փաստաթղթերում՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակում:

Իր մեկնարկի պահից, ԿԲ-ն առատաձեռն դրամական աջակցություն է ստացել է Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայից, իսկ 2019թ. -ին Հայաստանում ԿԲ-ին աջակցություն է ցուցաբերել Ժողովրդավարության ազգային հիմնադրամը (NED).

ԿԲ-ի տվյալները պաշտպանված են հեղինակային իրավունքով: ԿԲ-ի տվյալներն օգտագործելիս խնդրում ենք նշել դրանց աղբյուրը՝ օգտագործելով հղման հետևյալ ձևաչափը:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ. (տվյալադարանի տարեթիվը) «[տվյալադարանի անվանումը՝ Կովկասյան բարոմետր]»: Ներբեռնվել է <http://www.caucasusbarometer.org/կայքից> — օրը {տվյալադարանի այցի ամսաթիվը}:

Աշխարհագրական և Ժողովրդագրական ընդգրկումը

ԿԲ-ի 2019թ. -ի փուլը Հայաստանում իրականացվել է 2020թ. -ի սկզբին, իսկ Վրաստանում՝ 2019թ. -ի վերջին, ՀՌԿԿ-Հայաստանի և ՀՌԿԿ Վրաստանի կողմից: Հարցմանը մասնակցել է Հայաստանի և Վրաստանի չափահաս (18+) բնակչությունը: Վրաստանի պարագայում, չի ընդգրկվել ներկայումս Թբիլիսիի վերահսկողությունից դուրս գտնվող Աբխազիայի և Հարավային Օսեթիայի բնակչությունը: Հայաստանում հարցազրույցներն իրականացվել են հայերենով, Վրաստանում՝ վրացերենով, հայերենով և ադրբեջաներենով: Բոլոր հարցազրույցներն անցկացվել են դեմ-առ-դեմ ձևաչափով՝ օգտագործելով համակարգչային օժանդակությամբ անհատական հարցման (CAPI) մեթոդը:

Ընտրանքի նախագծումը

Երկու երկրներում էլ հարցման մասնակիցներն ընտրվել են ստրատիֆիկացված բազմաստիճան կլաստերային ընտրանքի մեթոդով: Որպես ընտրանքի առաջնային միավորներ, ՀՌԿԿ գրասենյակներն օգտագործել են ընտրատեղամասերի ցուցակները: Հայաստանի դեպքում ընտրանքի շրջանակը որոշվել է ըստ 2018թ. -ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների տեղամասերի, իսկ Վրաստանի դեպքում՝ ըստ 2016թ. -ի խորհրդարանական ընտրությունների տեղամասերի:

Յուրաքանչյուր երկրում ընտրանքի առաջնային միավորները դասակարգվել են երեք ստրատաներում՝ մայրաքաղաքների, այլ քաղաքների և գյուղական վայրերի ընտրատեղամասեր: Այնուհետև, քաղաքային և գյուղական ստրատաները բաժանվել են չորս աշխարհագրական շրջանների՝ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան: Ընտրանքի ծավալի վրա ազդել են մի քանի գործոններ, մասնավորապես՝ ներկայացված լինելու ենթակա բնակչության ենթախմբերի թիվը, ընտրանքային սխալի թիրախային մակարդակը, ինչպես նաև առկա ռեսուրսները: ՀՌԿԿ փորձագետները յուրաքանչյուր ստրատայի համար ընտրանքի ծավալը ճշգրտել են հաշվի առնելով չկայացած հարցազրույցների ակնկալվող քանակը: Հետևաբար, հարցումների թիրախային թիվն ապահովելու համար հարցազրուցավարներն այցելել են ավելի շատ տնային տնտեսություններ: Ընտրանքի ծավալը յուրաքանչյուր ստրատայի համար առանձին վերցված հաշվարկվել է 95% վստահության մակարդակում:

Առաջին փուլում, յուրաքանչյուր աշխարհագրական ենթաստրատայից՝ վերջինիս չափի համամասնության սկզբունքով (PPS), ձևավորվել է առաջնային միավորների ընտրանքը: Այնուհետև, այցեր են կատարվել ընտրված առաջնային միավորներ և *պատահական քայլի* սկզբունքով ընտրվել են տնային տնտեսությունները (ընտրանքի երկրորդային միավորները)՝ նախապես որոշված մեկնարկային կետի, քայլի ուղղության և քայլի չափի կիրառմամբ: Վերջին փուլում, Քիշի աղյուսակով ընտրվել են հարցման մասնակիցները: Հարցազրուցավարներին խիստ ցուցում է տրվել հարցազրույց անցկացնել միայն ընտրված հարցվողների հետ և չփոխարինել նրանց այլ մարդկանցով:

Հարցարանի մշակումը և փորձարկումը

2019թ. -ի ԿԲ-ի հարցարանը մշակվել է ՀՌԿԿ-Վրաստանի և ՀՌԿԿ-Հայաստանի գրասենյակների կողմից: Նոր հարցերի հետ մեկտեղ, այս գործիքը պարունակել է նաև մի շարք հարցեր, որոնք օգտագործվել էին ԿԲ-ի նախորդ հարցումների ժամանակ:

Մայր հարցարանը մշակվել է անգլերենով: Հարցարանի նախնական տարբերակը փորձարկվել է ՀՌԿԿ-Վրաստանի գրասենյակի կողմից: Այն մասնավորապես փորձարկվել է փոքր՝ 143 մասնակից ունեցող հարցման շրջանակներում Թբիլիսիում (Իսանի, Կրժանիսի և Գլդանի շրջաններ), Ռուսթավի քաղաքում և Ծերովանի գյուղում (Սցխեթայի շրջան)՝ 2019թ. -ի հոկտեմբերի 1-ից 3-ն ընկած ժամանակահատվածում: Հայաստանում հարցարանի փորձարկմանը մասնակցել է 15 հարցվող Երևանից և Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերից՝ 2020թ. -ի փետրվարի 14-ից 17-ն ընկած ժամանակահատվածում: Փորձնական հարցումներից հետո, ՀՌԿԿ գրասենյակները լավարկել են հարցարանը և թարգմանել վերջնական գործիքը հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն:

Դաշտային աշխատանքներ

Հայաստանում և Վրաստանում օրենսդրությունը չի պահանջում որևէ հարցում անցկացնելու համար թույլտվություն ստանալ կառավարությունից: Այդուհանդերձ, երկու երկրների ՀՌԿԿ գրասենյակները պատրաստել են հարցման նպատակները և ընթացակարգերը բացատրող պաշտոնական նամակներ: Հարցազրուցավարներին հրահանգվել էր ցույց տալ այդ նամակներն ընտրված տնային տնտեսությունների անդամներին և հարցվողներին:

2019թ. -ի ԿԲ-ի դաշտային աշխատանքներն իրականացվել են դեմ-առ-դեմ հարցազրույցների CAPI ձևաչափով: Հայաստանում բոլոր հարցազրույցներն անցկացվել են հայերենով: Վրաստանում հարցազրույցների 92.1%-ն անցկացվել է վրացերենով, 5.7%-ը՝ ադրբեջաներենով, և 2.2%-ը՝ հայերենով:

Հարցարանները պլանշետների համար ծրագրավորելու նպատակով ՀՌԿԿ գրասենյակներն օգտագործել են ODK ծրագիրը: Վերջինս տվյալների հավաքագրման անվճար և հանրոքեն հասանելի գործիք է, որը թույլ է տալիս կիրառել տրամաբանական ստուգում, հարցերի շարքի ավտոմատացված անցումներ, մուլտիմեդիա տվյալների և հարցարանի ստուգման համար անհրաժեշտ համալիր ռեսուրսներ: Հարցազրույցներից հավաքված տեղեկատվությունը վերբեռնելու և պահպանելու համար ՀՌԿԿ գրասենյակներն օգտագործել են իրենց կոդավորված և ապահով սերվերները:

2019թ. -ի ԿԲ-ի տվյալների հավաքագրման գործընթացում ներգրավվել են ՀՌԿԿ-ի փորձառու հարցազրուցավարներն ու դաշտային աշխատանքների ղեկավարները: Նրանց մեծ մասը ՀՌԿԿ գրասենյակների հետ աշխատելու մի քանի տարվա փորձ ունի:

2019թ. -ի ԿԲ-ի դաշտային աշխատանքները Հայաստանում վերահսկել է մեկ համակարգող, իսկ Վրաստանում՝ ութ խմբավար: Հայաստանում անցկացված դաշտային աշխատանքներում ընդգրկվել է 37 հարցազրուցավար, իսկ Վրաստանի դաշտային աշխատանքներում՝ 110:

Նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը, ղեկավարների և հարցազրուցավարների համար կազմակերպվել են ինտենսիվ դասընթացներ: Մինչև դասընթացները, բոլոր հարցազրուցավարներն ստացել են հարցարանի, ցուցադրաքարտերի և ընտրանքի հրահանգների թղթային տարբերակները: Դասընթացի ժամանակ հարցազրուցավարները փորձարկել են հարցարանը և ընտրանքի հրահանգները (այդ թվում՝ պատահական քայլը, քայլի չափը և հարցվողի ընտրությունը), ինչպես նաև քննարկել են այն խնդիրները կամ մարտահրավերները, որոնք հնարավոր է՝ առաջանան դաշտային աշխատանքների ընթացքում:

Հայաստանում դաշտային աշխատանքներն իրականացվել են 2020թ. -ի փետրվարի 21-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում: Վրաստանում հարցազրույցներն անցկացվել են 2019թ. -ի հոկտեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 4-ը: Հայաստանում դաշտային աշխատանքների ավարտը համընկել է հանրապետությունում COVID-19 համավարակի առաջին դեպքերի հայտնաբերման և արտակարգ դրություն հայտարարելու (2020թ. -ի մարտի 19-ին) հետ: Դաշտային աշխատանքները Հայաստանում դադարեցվել են, սակայն ընդհանուր առմամբ այս հանգամանքը ազդեցություն չի թողել ընտրանքի կառուցվածքի վրա: Չստացված

հարցումների հաշվով ճշգրտման նպատակով համապատասխան փոփոխություններ են արվել տվյալների կշռման ռազմավարության մեջ:

Դաշտային աշխատանքների ժամանակ, հարցազրուցավարներին հրահանգվել է հետևել պատահական քայլի միջոցով հարցման մասնակիցներ ընտրելու պահանջներին: Թիրախային տնային տնտեսության ընտրությունից հետո, հարցազրուցավարներին հրահանգվել է տվյալ տնային տնտեսություն այցելելու առնվազն երեք փորձ կատարել: Տնային տնտեսություն մուտք գործելուց հետո, հարցազրուցավարները բացատրել են հարցման նպատակները տնային տնտեսության անդամներին և Քիշի աղյուսակի օգնությամբ ընտրել հարցվողին: Եթե տնային տնտեսությունից ընտրված հարցվողը տանից բացակայել է, դրանից հետո հարցազրուցավարները կատարել են առնվազն երեք հետայց՝ հարցվողի հետ հարցազրույցն անցկացնելու համար: Տնային տնտեսությունների և հարցվողների կողմից հարցազրույցներից հրաժարման դեպքերը պատշաճորեն գրանցվել են հարցազրուցավարների ձևաթղթերում և պլանշետներում (Աղյուսակ 1):

	Հայաստան		Վրաստան		Ը ն դ ամ է ն ը	
	N	%	N	%	N	%
Լիարժեք հարցում	1,491	37.14	2,317	36.36	3,808	36.66
Մասնակի հարցում	100	2.49	135	2.12	235	2.26
Այլ	1	0.02	0	0	1	0.01
Համապատասխան հարցվող չկա	15	0.37	10	0.16	25	0.24
Հարցվողը հասանելի չէ	12	0.3	346	5.43	358	3.45
Ֆիզիկապես կամ հոգեպես անկարող է	18	0.45	82	1.29	100	0.96
Հարցվողի ընտրության աղյուսակը չի լրացվել	719	17.91	1,034	16.22	1,753	16.88
Տնային տնտեսության հրաժարում	1,285	32.01	1,929	30.27	3,214	30.94
Հարցվողի հրաժարում	353	8.79	390	6.12	743	7.15
Լեզվական խնդիր տնային տնտեսության հետ	19	0.47	121	1.9	140	1.35
Լեզվական խնդիր հարցվողի հետ	1	0.02	9	0.14	10	0.1

Աղյուսակ 1. Հարցման փորձերի արդյունքներն ըստ երկրների (հիմք ընդունելով Հանրային կարծիքի ուսումնասիրության ամերիկյան ասոցիացիայի դասակարգումը)

Ընդհանուր առմամբ, Հայաստանում իրականացվել 1,491 լիարժեք հարցազրույց, իսկ Վրաստանում՝ 2,317: Հայաստանում պատասխանների նվազագույն հաճախականության ցուցանիշը (AAPOR RR1) կազմել է 37,3%, իսկ Վրաստանում՝ 36,4%: Աղյուսակ 2-ը մանրամասնորեն ներկայացնում է պատասխանների վիճակագրությունն ըստ երկրների և ստրատանների:

		Մայ ր աք աղ աք		Այ ւ ք աղ աք ն է ր		Գյ ու դ ալ ան	
		N	%	N	%	N	%
Հ այ ս ա տ ան	Չ ս տ ա գ վ ա ծ հ ա ր ց ու մ ն է ր	1,599	75	612	57.2	312	38.4
	Ա վ ա ր տ ու ն հ ա ր ց ա գ ր ու յ ը ն է ր	533	25	458	42.8	500	61.6
Վ ր ս ա տ ան	Չ ս տ ա գ վ ա ծ հ ա ր ց ու մ ն է ր	2,588	82.4	549	48.4	919	43.8
	Ա վ ա ր տ ու ն հ ա ր ց ա գ ր ու յ ը ն է ր	553	17.6	585	51.6	1,179	56.2

Աղյուսակ 2: Ավարտուն հարցազրույցների թիվն ըստ ստրատանների

Հայաստանում առաջին այցի ընթացքում իրականացվել է 1,424 հարցազրույց, ոչ մի հարցազրույց չի իրականացվել երկրորդ այցի ժամանակ, և 447 հարցազրույց իրականացվել է երրորդ փորձի ընթացքում: Վրաստանում առաջին այցով իրականացվել է 1,827 հարցազրույց, 14 հարցազրույց իրականացվել է երկրորդ և 70 հարցազրույց՝ երրորդ այցի ընթացքում: Հայաստանում հարցազրույցները միջինում տևել են 43, իսկ Վրաստանում՝ 45 րոպե:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո ՀՌԿԿ-Վրաստանն իրականացրել է հարցազրույցների 9.4%-ի (218 դիտարկում) ստուգում՝ դեմ-առ-դեմ ձևաչափով: Հայաստանի պարագայում, դաշտային աշխատանքներին զուգահեռ իրականացվել է հարցազրույցների 6.7%-ի (100 դիտարկում) ստուգում՝ հեռախոսային կարճ հարցման ձևաչափով:

Տվյալների կառավարում և վերլուծություն

Տվյալների մեջ անհամապատասխանությունները գտնելու և բոլոր հնարավոր դեպքերում դրանք շտկելու նպատակով իրականացվել են տվյալների մաքրման աշխատանքներ: Բացի այդ, տեքստային պատասխաններով բաց հարցերը վերակոդավորվել են և համապատասխանեցվել թվային կոդերին: Հարկ է նշել, որ CAPI-ի մեթոդի կիրառումը տվյալների մաքրումը դարձրել է ավելի արդյունավետ: Մասնավորապես, նախապես ծրագրավորված հարցարանի ձևանմուշն օգնել է բացառելու երկիմաստ կոդերի ներմուծումը տվյալադարան: Բացի այդ, ձևանմուշը չի ընդունել հարցարանով թույլատրված ավելի շատ արժեքներ ընտրելու հետ կապված սխալները: Աղյուսակ 3-ում ամփոփված են տվյալների մաքրման համար նախատեսված լրացուցիչ ընթացակարգերը:

Խնդիր	Ընթացակարգ
Մուտքագրված պատասխանները երկիմաստ են, սակայն տվյալները մաքրող մասնագետը կարողացել է որոշել, թե որ պատասխանն է տվել հարցվողը:	Արժեքը համապատասխանեցվել է այն պատասխանին, որն, ըստ տվյալները մաքրող մասնագետի, տվել է հարցվողը:
Մուտքագրված պատասխանները երկիմաստ են, և տվյալները մաքրող մասնագետը չի կարողացել որոշել, թե որ պատասխանն է տվել հարցվողը:	Արժեքը կոդավորվել է որպես հարցազրուցավարի սխալի:

Աղյուսակ 3: Տվյալների մաքրման լրացուցիչ ընթացակարգեր

Ընտրանքի կշիռները հաշվի են առնում այն փաստը, որ ամբողջ բնակչության տարբեր անդամներ հարցազրույցի համար ընտրվելու տարբեր հավանականություններ ունեն, և հետևաբար, ներկայացնում են ընդհանուր բնակչության մեջ տարբեր թվով մարդկանց: Ընտրանքի կշիռներն անհրաժեշտ են բնակչության այն համամասնությունը գնահատելիս, որը հարցմանը մասնակցելու դեպքում կընտրեն համանման պատասխաններ: Ընտրանքի կշիռները հաշվարկելու համար ՀՌԿԿ գրասենյակներն օգտագործել են ընտրատեղամասերի մակարդակում առկա տվյալները, այն է՝ ընտրողների թիվը:

Այնուհետև, ընտրանքի կշիռները ճշգրտվել են չստացված պատասխանների ցուցանիշով: Օրինակ՝ եթե որևէ ընտրատեղամասում հարցազրույցի փորձերի 80%-ը պսակվում է հաջողությամբ, ապա 20% հրաժարումներն այդ կշիռը բարձրացնում են 1.25 գործակցով:

Վերջապես, հարցվողները ներկայացնում են բնակչության տարբեր կատեգորիաներ՝ ըստ սեռի, տարիքի և բնակավայրի տիպի (օրինակ՝ Թբիլիսիում ապրող 18-34 տարեկան իգական սեռի հարցվողներ կամ Հայաստանի գյուղական բնակավայրերի 35-54 տարեկան արական սեռի հարցվողներ): Հետևաբար, կշիռները պետք է ճշգրտվեն այնպես, որ ընտրանքի կշռված սեռա-տարիքային համամասնությունը համաչափ լինի ընդհանուր բնակչության սեռա-տարիքային կազմին: Ժողովրդագրական համամասնությունները հաշվարկելու համար ՀՌԿԿ-Վրաստանն օգտագործել է 2014թ. -ի Վրաստանի ազգային մարդահամարի տվյալները, իսկ ՀՌԿԿ-Հայաստանն օգտագործել է Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական կոմիտեի 2018թ. -ի բնակչության թվաքանակի գնահատումները:

Քանի որ Կովկասյան բարոմետրը կիրառում է հարցման համալիր (բարդ) մեթոդաբանություն, իհիստ ցանկալի է, որ տվյալադարանն ուսումնասիրելիս հետազոտողները հաշվի առնեն այդ մեթոդաբանությունը: Ստորև ներկայացված է STATA ծրագրային փաթեթով վերլուծության համար առաջարկվող շարահյուսությունը (syntax):

Վերլուծություն տնային տնտեսությունների մակարդակում. `svyset PSU [pweight=HHWT], strata(SUBSTRATUM) fpc(NPSUSS) singleunit(certainty) || ID, fpc(NHHPSU)`

Վերլուծություն անհատական մակարդակում. `svyset PSU [pweight=INDWT], strata(SUBSTRATUM) fpc(NPSUSS) singleunit(certainty) || ID, fpc(NHHPSU) || _n, fpc(NADHH)`

Տվյալադարաններ և փաստաթղթեր

Տվյալադարանները SPSS և STATA ձևաչափերով, հարցման գործիքները և ԿԲ-ի նախորդ փուլերի մասին տեղեկատվությունը հասանելի են Caucasusbarometer.org կայքում: